ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԳԵՐՄԱՆԵՐԵՆ

ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ, ՍԻԱՄՆԱԿԱՆ ԵՎ ԲԱՆԱՎՈՐ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Ո Ւ Ղ Ե Ց Ո Ւ Յ Ց

ԵՐԵՎԱՆ 2012

ՀՏԴ 373:803.0
ԳՄԴ 74.2+81.2 Գերմ
Գ 502

Կազմողներ՝ ՅՈՒՐԻ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
ԱՍՏՂԻԿ ԱՎԵՏՅԱՆ
ՍՈՒՍԱՆՆԱ ԱՌԱՔԵԼՅԱՆ
ԿԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Խմբագիր՝ ՅՈՒՐԻ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Գ 502 Գերմաներենի պետական ավարտական, միասնական և բանավոր քննությունների ուղեցույց: Երևան, Գնահատման և թեստավորման
կենտրոն, 2012, 34էջ:

ԳՄԴ 74.2+81.2 Գերմ

ISBN 978-99941-864-8-8

© Գնահատման և թեստավորման կենտրոն, 2012 թ.

ՆԱԽԱԲԱՆ

«Գերմաներեն» առարկայի ուղեցույցի նպատակն է օգնել հանրակրթական դպրոցների շրջանավարտներին և բարձրագույն ուսումնական հաստատությունների դիմորդներին նախապատրաստվելու պետական ավարտական, միասնական և բանավոր քննություններին: Ուղեցույցը ներառում է՝

I. ցուցումներ պետական ավարտական և միասնական քննության թեստի մասին,

II. բանավոր քննության պահանջները և գնահատման չափանիշները:

I. Ցուցումներ պետական ավարտական և միասնական քննության թեստի մասին

Պետական ավարտական և միասնական քննության թեստի մասին ցուցումներում ներառված են՝

1. քննական աշխատանքի հատկորոշիչը,
2. պատասխանների ձևաթուղթը և դրա լրացման կարգը,
3. քննական աշխատանքի կատարման վերաբերյալ ցուցումներ և խորհուրդներ,
4. թեստի նկարագիրը,
5. քննական առաջադրանքների նմուշներ:

Քննական աշխատանքի հատկորոշիչը

Հատկորոշիչում ներկայացված է քննական աշխատանքի կառուցվածքը: Սահմանված են քննական աշխատանքի կատարմանը հատկացվող ժամանակը և գնահատման չափանիշները, թեստային առաջադրանքները կատարելու համար անհրաժեշտ գիտելիքների ծավալը:

Գերմաներենի քննության թեստը բաղկացած է երկու՝ Ա և Բ մակարդակներից:

Առաջինը (Ա մակարդակ) նախատեսված է հանրակրթական դպրոցի շրջանավարտների համար: Այն բաղկացած է 8 առաջադրանքից, որոնցում ներառված է 50 ենթաառաջադրանք: Յուրաքանչյուր ենթաառաջադրանքի համար տրված է 4 պատասխան՝ a, b, c, d, որոնցից միայն մեկն է ճիշտ: Ճիշտ պատասխանը գնահատվում է մեկ միավոր: Ենթաառաջադրանքը կատարված է համարվում, եթե քննություն հանձնողի ընտրած պատասխանը համընկնում է ճիշտ պատասխանի հետ:

Թեստի երկրորդ մասը (Բ մակարդակ) բաղկացած է 5 առաջադրանքից, որոնցում ներառված է 30 ենթաառաջադրանք: Դրանց կատարման համար պահանջվում է գիտելիքների ու կարողությունների ավելի բարձր մակարդակ: Ենթաառաջադրանքների կատարման և գնահատման սկզբունքները նույնն են:

Միասնական թեստի Ա և Բ մակարդակների 80 առաջադրանքները նախատեսված են հանրակրթական դպրոցի այն շրջանավարտների համար, որոնք ցանկանում են կրթությունը շարունակել բարձրագույն ուսումնական հաստատություններում: Դրանցով ստուգվում են շրջանավարտի հենքային գիտելիքները՝ գերմաներենի դպրոցական ծրագրի շրջանակում:

Գերմաներենի պետական ավարտական և միասնական քննության համար որպես հիմք և սկզբնաղբյուր են ընդունվում «Գերմաներեն» առարկայի ուսումնական ծրագրերը, դպրոցական դասագրքերը, ինչպես նաև «Գերմաներեն» պետական ավարտական և միասնական քննության առաջադրանքների շտեմարանը»:

Առաջադրանքները կատարելուց հետո դիմորդը պատասխանները պետք է նշի պատասխանների ձևաթղթում, որը կստուգվի համակարգչային ծրագրերի կիրառմամբ:

Միասնական քննական թեստի առաջադրանքների կատարման համար տրվում է 150 րոպե:

Շրջանավարտի հավաքած միավորները սանդղակավորվում են:

Շրջանավարտներին և ուսուցիչներին օգնելու նպատակով ստորև ներկայացնում ենք Ա և Բ մակարդակների առաջադրանքները կատարելու համար անհրաժեշտ գիտելիքների ծավալը:

Բառակազմություն

Ածանցում և բառաբարդում: Գերմաներենի ամենատարածված նախածանցներն ու վերջածանցները՝
<u>գոյականական նախածանցներ</u>՝ **ge-, un-, er-, miss-,**
<u>գոյականակերտ վերջածանցներ՝</u> **-er, -ler, -ner, -ling, -el, -or, -us, -ismus, -nom, -log, -ist, -ant, -ent, -at, -it, -ot, -heit, -keit, -schaft, -tion, -ung, -ei, -ie, -ik, -ur, -sal, -nis, -um, -tum, -tel,**
<u>ածականական նախածանցներ</u>՝ **un-, ur-, er-,**
<u>ածականակերտ վերջածանցներ</u>՝ **-ig, -lich, -los, -bar, -haft, -en, -ern,**
<u>բայական նախածանցներ</u>՝ **ab-, an-, aus-, bei-, ein-, mit-, nach-, vor-, zu-, be-, ge-, er-, ver-, zer-, ent-, miss-,**
<u>բայական վերջածանց՝</u> **-ier:**

Ձևաբանություն

Հոդ (արտիկլ): Որոշյալ հոդի գործածությունը: Անորոշ հոդի գործածությունը: Հոդի բացակայությունը:

Գոյական: Գոյականների թիվը և հոլովումը: Նախադասության մեջ գոյականների գործածությունը տարբեր հոլովներով:

Բայ: Ուժեղ և թույլ բայերի ժամանակային ձևերի կազմությունն ու գործածությունը **Präsens, Imperfekt, Perfekt, Plusquamperfekt, Futurum** ժամանակներով: Հրամայական ձևերի կազմությունը:

Ածական անուն: Ածականների շարահյուսական գործառույթները: Ածականների համեմատության աստիճանների կազմությունը: Ածականի հոլովումը:

Մակբայ: Մակբայների իմաստային և շարահյուսական գործառույթները:

Դերանուն: Անձնական, ստացական, ցուցական, հարցական և հարաբերական դերանուններն ու նրանց հոլովումը:

Նախդիրներ: **Genitiv, Dativ, Akkusativ, Dativ և Akkusativ** պահանջող նախդիրները:

Դիմորդը քննության ժամանակ պետք է կարողանա ընկալել և գործածել.

ա) **Infinitiv**-ի խմբերը և **zu** մասնիկի հետ Invinitiv-ի գործածության հիմնական դեպքերը,

բ) **Präsens, Imperfekt**, **Plusquamperfekt, Futurum** ժամանակային ձևերով դրված Passiv նախադասությունները,

գ) **haben+zu+Infinitiv**, **sein+zu+Infinitiv** կառույցները:

Շարահյուսություն

Հաստատական, ժխտական (nicht և kein), հրամայական և հարցական (հարցական բառերով և առանց դրանց) նախադասությունների գործածությունը: Բայական (նաև անջատվող նախածանցներով) և անվանական ստորոգյալների գործածությունը ժամանակային պարզ և բաղադրյալ ձևերով:

Մոդալ բայերով և **Infinitiv**-ով, խոնարհվող բայով և **zu** + **Infinitiv**-ով արտահայտված բաղադրյալ ստորոգյալով նախադասությունների գործածությունը:

Ներգործական կերպով կազմություններ: Կրավորական կերպով կառուցվածքների կազմությունը և գործածությունը: **Aktiv** → **Passiv** և **Passiv** → **Aktiv** փոխակերպումների սկզբունքները:

Բարդ ստորադասական նախադասությունների գործածությունը: Երկրորդական նախադասություններ՝ ուղիղ

խնդիր երկրորդական նախադասություն, ժամանակի պարագա երկրորդական նախադասություն, պատճառի պարագա երկրորդական նախադասություն, որոշիչ երկրորդական նախադասություն: **Und, aber, denn, deshalb** շաղկապներով բարդ համադասական նախադասությունների գործածությունը: **Man, es** դերանուններով արտահայտված ենթակայով նախադասությունների գործածությունը:

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ՁԵՎԱԹՈՒՂԹ

2012 թ. Միասնական քննություն

Պատասխանների ձևաթուղթ
Գերմաներեն

ազգանուն

անուն հայրանուն

անձնական համար

Եղե՛ք ուշադիր

- Լրացրե՛ք միայն սև գելային գրիչով:
- Չեր ընտրած տարբերակի համարին համապատասխանող վանդակում դրե՛ք X նշանը (միևնույն այուսակի մեկից ավելի վանդակներում ցանկացած նշում կհամարվի սխալ):
- Թվերը գրե՛ք հետևյալ տեսքով՝ 1 2 3 4 5 6 7 8 9 0

0 6

Թեստ № 1 2 3 4

Ա մակարդակ

Պատասխանի համարը

I	1	2	3	4	5	II	6	7	8	9	10	III	11	12	13	14	15
a						a						a					
b						b						b					
c						c						c					
d						d						d					

IV	16	17	18	19	20	21	22	23	24	25	V	26	27	28	29	30	VI	31	32	33	34	35
a											a						a					
b											b						b					
c											c						c					
d											d						d					

VII	36	37	38	39	40	VIII	41	42	43	44	45	46	47	48	49	50
a						a										
b						b										
c						c										
d						d										

Ա մակարդակում սխալ նշված պատասխանների տեսակը

a		
b		
c		
d		

Բ մակարդակ

Պատասխանի համարը

IX	51	52	53	54	55	56	57	58	59	60	X	61	62	63	64	65	XI	66	67	68	69	70
a											a						a					
b											b						b					
c											c						c					
d											d						d					

Պատասխանի համարը

XII	71	72	73	74	75	XIII	76	77	78	79	80
a						a					
b						b					
c						c					
d						d					

Բ մակարդակում սխալ նշված պատասխանների տեսակը

a		
b		
c		
d		

Ամբողջ ձևաթղթում փոխված պատասխանների քանակը

Լրացրե՛ք այս հատվածումը՝

Ծանոթ եմ՝ քննության կարգին:

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ՁԵՎԱԹՂԹԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

Պետական ավարտական և միասնական քննության թեստերի առաջադրանքների պատասխանները անհրաժեշտ է լրացնել համապատասխան ձևաթղթում:

Ձևաթուղթը լրացվում է **միայն սև գելային գրիչով**:

Ձևաթղթում թվերով նշված են ենթաառաջադրանքների հերթական համարները, իսկ տառերով՝ պատասխանների տարբերակները (a. b, c, d): Յուրաքանչյուր ենթաառաջադրանքի պատասխան պետք է **«X»** նշանով նշել դրան համապատասխանող թվի սյունակում (1, 2, 3, 4 …)՝ համապատասխան տառի դիմաց:

Օրինակ՝ եթե 7-րդ առաջադրանքի ճիշտ պատասխանը c-ն է, պետք է նշել հետևյալ ձևով՝



Սխալվելու դեպքում քննություն հանձնողը ունի ուղղման 3 հնարավորություն Ա մակարդակում և 2-ը՝ Բ մակարդակում: Ուղղումների համար նախատեսված հատվածում, վերևի 2 մեծ վանդակում, գրվում է այն ենթաառաջադրանքի համարը, որի պատասխանն ուղղվում է:

Օրինակ, եթե պատասխանների ձևաթղթում 15-րդ ենթաառաջադրանքում a տարբերակի փոխարեն սխալմամբ նշվել է b տարբերակը, ապա սխալների ուղղման բաժնում ճիշտ պատասխանը պետք է նշվի հետևյալ ձևով.



Սխալների ուղղման բաժնի համապատասխան վանդակում անհրաժեշտ է նշել փոխված պատասխանների քանակը:

Պատասխանների ձևաթղթի լրացման ժամանակ չի թույլատրվում՝

- օգտագործել թանձր հետքեր թողնող կամ ձևաթղթի հակառակ երեսին հետք թողնող գրիչ, ֆլոմաստեր, մատիտ, մարկեր և այլն,
- ձևաթղթի համապատասխան վանդակներում նշումների համար նախատեսված «X» նշանի փոխարեն դնել այլ նշան,
- վանդակը ներկել, վրան թուղթ սոսնձել,
- ձևաթղթի տեքստային մասում նշումներ կատարել,
- ձևաթղթի մաքուր մասերում (վանդակներից դուրս) նշաններ դնել,
- ջնջումներ անել:

Ձևաթուղթը պետք է լրացնել շատ ուշադիր և խնամքով: Այս պահանջները չկատարելու դեպքում ձևաթուղթը կճանաչվի անվավեր և չի ստուգվի:

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ԵՎ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

Քննական թեստի բոլոր առաջադրանքների կատարումը մեծ ուշադրություն է պահանջում:

Առաջադրանքի պահանջը ճիշտ հասկանալու համար անհրաժեշտ է նախ ուշադիր կարդալ այն, ապա անցնել ճիշտ պատասխանի ընտրությանը:

Հիշեք, որ առաջարկվող պատասխաններից միայն մեկն է ճիշտ:

Սովորեք խելամիտ օգտագործել ժամանակը: Թեստի առաջադրանքները կատարելու համար ձեզ սահմանափակ ժամանակ է տրվում: Քանի որ առաջադրանքներն իրենց բնույթով տարբեր են, պետք է ժամանակը ճիշտ բաշխեք:

Ժամանակ մի վատնեք երկար մտածելով այն հարցերի շուրջ, որոնց չեք կարող անմիջապես պատասխանել:

Նախ կատարեք այն առաջադրանքները, որոնց պատասխանները հաստատ գիտեք: Այդպես դուք ավելորդ ժամանակ չեք վատնի, չեք կորցնի ժամանակի զգացողությունը և թեստի՝ ձեր իմացած մյուս հարցերին պատասխանելու հնարավորությունը: Երբ կավարտեք ձեր իմացած բոլոր հարցերին պատասխանելը, վերադարձեք բաց թողած առաջադրանքներին:

Երբ տեսնում եք, որ ժամանակը մոտենում է ավարտին, և դուք հաստատ չգիտեք առաջադրանքի ճիշտ պատասխանը, ընտրեք ձեր կարծիքով առավել հավանականը: Հիշեք, որ թե՛ պատասխանը չնշելու և թե՛ սխալ պատասխանի դեպքում դուք միավոր չեք ստանում: Բայց հնարավոր է, որ ձեր կասկածներն անհիմն լինեն, և առավել հավանական թվացող պատասխանն իրոք ճիշտ պատասխանը լինի, որը գրելով միավոր չեք կորցնի:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը նախատեսված են սևագրության համար: **Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է նաև կախված ձեր քննական միավորը: Քննության ողջ ընթացքում կարգապահ եղեք, մի խոսեք և մի խանգարեք ուրիշներին:

ԹԵՍՏԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՆՄՈՒՇՆԵՐ

Ա մակարդակ

I. Ընտրել տեքստի բովանդակության առանձին հատվածներին համապատասխանող նախադասությունները:

Այս առաջադրանքով ստուգվում է թեստի բովանդակության ընկալումը շրջանավարտի կողմից: Տեքստը բաժանվում է հինգ պարբերությունների՝ որոշակի իմաստային ամբողջությամբ, հիմնական իմաստը ներկայացվում է չորս փոխակերպված նախադասություններով (a, b, c, d), որոնցից միայն մեկն է ճշգրիտ արտացոլում տվյալ պարբերության բովանդակությունը: Առաջադրանքի կատարումը պահանջում է գերմաներենի բառապաշարի և քերականության իմացություն, ինչպես նաև համապատասխան շարահյուսական կառուցվածքները փոխակերպելու կարողություն՝ դպրոցական ծրագրի շրջանակում: Փոխակերպման բնույթի սահմանափակումներ չկան, և կարևորը կոնկրետ պարբերության իմաստի համարժեք արտացոլումն է:

Օրինակ՝

Momo

1. Momo war ein armes Waisenkind. Momo sah sehr seltsam aus: sie war klein und ziemlich mager, so dass man nicht erkennen konnte, ob sie erst acht oder schon zwölf Jahre alt war. Momo hatte einen Kopf mit lockigem, kohlenschwarzem Haar. Es schien, dass ihre Haarlocken überhaupt keinen Kamm gesehen hatten. Sie hatte sehr große, wunderschöne wiederum kohlenschwarze Augen.
2. Momo ging fast immer barfuß, nur im Winter trug sie manchmal Schuhe. Aber es waren zwei verschiedene Schuhe, die nicht zusammenpassten und ihr zu groß waren. Momo trug alles, was sie irgendwo fand oder geschenkt bekam. Momos bunter Rock war ihr auch viel zu groß.
3. Was die kleine Momo konnte wie kein anderer, das war: Zuhören. Und das ist etwas Besonderes, was nicht jeder kann. Wirklich zuhören können nur ganz wenige Menschen. Wer anders denkt, irrt sich. Und so wie Momo zuhören konnte, war es ganz und gar einmalig.
4. Momo konnte so zuhören, dass dummen Leuten plötzlich sehr gescheite Gedanken kamen. Nicht etwa, weil sie etwas sagte oder fragte, was den anderen auf solche Gedanken brachte, nein, sie saß nur da und hörte einfach zu, mit aller Aufmerksamkeit.
5. Beim Zuhören schaute sie den Sprecher mit ihren großen, dunklen Augen an und der Sprecher fühlte, wie in ihm auf einmal Gedanken auftauchten, von denen er nie geahnt hatte, dass sie in ihm stecken. Sie konnte so zuhören, dass Unglückliche und Bedrückte zufrieden und froh wurden. So konnte Momo zuhören.

1.
   a) Man konnte genau erkennen, wie alt Momo war.
   b) Momo hatte große wunderschöne blaue Augen.
   c) Man konnte nicht genau erkennen, wie alt Momo war.
   d) Momo hatte lange, glatte, schwarze Haare.

2.
   a) Momo trug alles, was sie geschenkt bekam.
   b) Momo trug im Winter warme Schuhe.
   c) Momo kaufte ihre Röcke auf dem Markt.
   d) Momo trug immer warme Schuhe.
3.
   a) Zuhören ist nichts Besonderes.
   b) Richtig zuhören kann jeder.
   c) So, wie Momo zuhörte, war einmalig.
   d) Was die kleine Momo konnte, war das Erzählen.
4.
   a) Im Gespräch mit Momo wurden die Leute immer dümmer.
   b) Momo saß da und hörte aufmerksam zu.
   c) Momo stellte dem Sprecher viele Fragen.
   d) Im Gespräch mit Momo hörten ihr alle aufmerksam zu.
5.
   a) Beim Zuhören senkte Momo den Kopf und schloss die Augen.
   b) Wenn Momo dem Sprecher zuhörte, erwachten bei ihr dumme Gedanken.
   c) Beim Zuhören waren die Besucher bedrückt und unglücklich.
   d) Wenn man mit Momo sprach, wurde man froh und zufrieden.

II. Ո՞ր բնագավառներին են վերաբերում հետևյալ պարբերությունները:

Առաջադրանքը բաղկացած է 5 ենթաառաջադրանքից: Առաջադրանքը կատարելու համար շրջանավարտը պետք է տիրապետի համապատասխան թեմայի բառապաշարին: Որոշ դեպքերում նույնիսկ մեկ բառի առկայությունը նրան կարող է հուշել համապատասխան բնագավառը, որին վերաբերում է կոնկրետ համատեքստը: Միևնույն ժամանակ

առանձին ուշադրություն է պահանջում ճիշտ պատասխանի ընտրությունը, քանի որ դրա կողքին երեք սխալ բնագավառների նշումը երբեմն կարող է շփոթմունք առաջացնել, եթե շրջանավարտը չի ընկալում ամբողջ համատեքստը: Ինչպես ուղեցույցում առկա թեստի նմուշներում, այնպես էլ քննական թեստերում առաջադրվող թեմաները վերցվում են միայն դպրոցական ծրագրերից: Օրինակ՝

In Deutschland besuchen alle Kinder vier Jahre lang die Grundschule. Danach können sie zwischen verschiedenen Schultypen wählen. Sie haben die Wahl zwischen Hauptschule, Realschule, Gymnasium und Gesamtschule. Die Wahl der Schule hängt von den Interessen und Fähigkeiten der Schüler ab.

a) Gymnasium
b) Schulsystem
c) Werbung
d) Interessen

III. Ընտրել տրված գոյականներին իմաստով համապատասխանող բայերը:

Առաջադրանքը բաղկացած է 5 ենթաառաջադրանքից: Այս առաջադրանքի օգնությամբ ստուգվում են շրջանավարտի հատկաբանական (իդիոմատիկ) կառույցներ կազմելու համար անհրաժեշտ գիտելիքները և կարողությունները՝ ելնելով գերմաներենին հատուկ ձևիմաստային կաղապարներից: Այդպիսով յուրաքանչյուր գոյականի դիմաց տրված չորս բայաձևերից ընտրվում է այն միակ ձևը, որը տվյալ գոյականի հետ համադրմամբ կազմում է ճիշտ **ձևիմաստային կաղապար**:

Առաջադրանքը կազմված է զուգաձևությունների բացառման սկզբունքով: Օրինակ՝ einen Ausflug - machen համապատասխանությունը առաջադրանքում այլընտրանք չունի: Օրինակ՝

einen Ausflug

a) wandern
b) machen
c) fahren
d) gehen

IV. Ընտրել ճիշտ տարբերակը:

Առաջադրանքը բաղկացած է 10 ենթաառաջադրանքից: Առաջադրանքի միջոցով ստուգվում են շրջանավարտի քերականական գիտելիքները: Առանձին տասը կետերը վերաբերում են գերմաներենի հիմնական խոսքի մասերի քերականական կարգերին, քերականական արտահայտության միջոցներին. հոլովում, խոնարհում, ածականների համեմատության աստիճաններ, բայի ժամանակային և սեռային ձևերի կազմություն, կապերի և կապական ձևերի գործածություն, խնդրառություն, անդրադարձ ձևերի կազմություն և այլն: Բնականաբար, թեստի մեկ առաջադրանքի սահմաններում գերմաներենի բոլոր քերականական առանձնահատկությունները հնարավոր չէ ներկայացնել, այդ պատճառով յուրաքանչյուր տարբերակում ընդգրկվում են դրանցից ամենակարևորները: Ուստի, անկախ կոնկրետ առաջադրանքի կազմությունից, դիմորդը պետք է տիրապետի դպրոցական ծրագրով նախատեսված քերականական անհրաժեշտ գիտելիքներին: Այդ նպատակով կարելի է օգտվել նաև ուղեցույցում ներկայացված չափանիշներից: Օրինակ՝

Kinder, ihr sprecht zu leise. _____ bitte lauter!

a) Sprecht
b) Sprechen Sie
c) Spricht
d) Sprich

V. Գտնել այն բառը, որն իմաստով տվյալ բառաշարքին չի պատկանում:

Առաջադրանքը բաղկացած է 5 ենթաառաջադրանքից: Այս առաջադրանքով ստուգվում են շրջանավարտի բառագիտական գիտելիքները: Այն ներկայացնում է իմաստային առումով որոշակի ոլորտի վերաբերող հինգ բառաշարք: Յուրաքանչյուր բառաշարքում մեկ բառ իմաստով այդ շարքին չի պատկանում: Պետք է յուրաքանչյուր բառաշարքում a, b, c, d կետերից առանձնացնել այդ բառը: Բառաշարքերը կազմվում են տարբեր խոսքի մասերից (լիիմաստ): Օրինակ՝

1.
a) die Wüste
b) das Ufer
c) die Küste
d) der Strand

2.
a) himmlisch
b) launisch
c) göttlich
d) herrlich

VI. Անուղղակի խոսքում տեղադրել անհրաժեշտ բառը:

Առաջադրանքը բաղկացած է 5 ենթաառաջադրանքից: Առաջադրանքի պահանջն է ուրիշի ուղղակի խոսքը հասկանալ և դարձնել անուղղակի: Ընդ որում, շրջանավարտին առաջարկվում է ընտրել միայն փոխակերպված նախադասության ստորոգյալը: Այսինքն՝ քննվողը պարտավոր չէ ստուգել նախադասության մյուս բաղադրիչների քերականորեն ճիշտ կամ սխալ լինելը, այլ, ելնելով արդեն պատրաստի կառույցից, պետք է ճիշտ ընտրի համապատասխան բայաձևը, որն իր հերթին կրկին նախադասության մեջ տեղադրելու համար պատրաստի ձև է:

Բնականաբար, ինչպես ուղղակի խոսքի, այնպես էլ անուղղակի խոսքի առանձին տարրերի իմաստների ճիշտ ընկալումը նույնպես առաջնային է: Հակառակ դեպքում առաջադրանքը կատարել հնարավոր չէ: Այստեղ նույնպես կիրառվում է զուգաձևությունների բացառման սկզբունքը: Օրինակ՝

Der Mann sagt dem Fremden: "Gehen Sie hier geradeaus und dann kommen Sie zum Theater!"
Der Mann _____ den Weg .

a) schreibt
b) berichtet
c) beschreibt
d) fragt

VII. Տեղադրել համապատասխան շաղկապը:

Առաջադրանքը բաղկացած է 5 ենթաառաջադրանքից: Առաջադրանքում ընդգրկվում են ինչպես բարդ համադասական, այնպես էլ բարդ ստորադասական նախադասություններ:

Շրջանավարտի՝ գերմաներենի նշված տիպի նախադասությունների կազմության սկզբունքների, շարադասության և, վերջապես, կոնկրետ շաղկապի իմաստի ու գործածության մասին գիտելիքները ստուգվում են համապատասխան շաղկապի կիրառությամբ: Պետք է նկատի ունենալ, որ կարևոր է նաև գլխավոր և երկրորդական նախադասությունների, ինչպես նաև երկու համազոր նախադասությունների իմաստային կապի ճիշտ ընկալումը, քանի որ նախադասությունները կազմվում են առաջին հայացքից ոչ ակնհայտ բովանդակային կապով: Ուստի առաջարկվում է նախապես փորձել հասկանալ կապակցվող նախադասություններից յուրաքանչյուրի բովանդակությունը և ուշադրություն դարձնել նաև երկրորդական նախադասության շարահյուսական կառուցվածքին, դրանից հետո միայն ընտրել համապատասխան շաղկապը: Օրինակ՝

Sie hatte solchen Hunger, ___ sie nicht einschlafen konnte.

a) denn
b) dass
c) aber
d) wenn

VIII. Ընտրել երկխոսության իմաստին համապատասխանող բառերը:

Առաջադրանքն ունի հաղորդակցական նշանակություն և կազմվում է երկխոսության հիման վրա: Դրա նպատակն է ստուգել շրջանավարտի՝ հաղորդակցական իրադրության մեջ կողմնորոշվելու կարողությունը՝ օգտագործելով a, b, c, d կետերում ներկայացված միակ ճիշտ ձևը: Երկխոսության մասնակիցները պայմանականորեն նշանակված են A և B տառերով: Այստեղ դիմորդը հնարավորություն ունի ընտրելու համապատասխան բառաքերականական ձևը՝ օգտվելով երկխոսության ընդհանուր բովանդակությունից, որը հուշում է նրան նաև երկխոսության վերնագիրը: Առաջադրանքում բաց թողած ձևերը արտահայտում են գերմաներենի հնարավորինս բազմաբնույթ բառաքերականական երևույթներ: Բովանդակային առումով երկխոսությունը ներկայացնում է առօրեական թեմա՝ դպրոցական ծրագրի սահմաններում: Երկխոսությունների բնույթը թույլատրում է նաև առօրյա խոսակցական բառապաշարի գործածություն, որն ընկալման առանձին դժվարություն չի հարուցում: Օրինակ՝

Im Warenhaus

1.

A: Guten Tag! ___ kann ich für Sie tun?

a) Was
b) Wann
c) Wie
d) Wo

2.

B: Ich ___ nach einem warmen Mantel.

a) kaufe
b) nehme
c) hole
d) suche

3.

A: Wir haben viele ___ Mäntel. Die Auswahl ist groß. Und hier ist einer in Ihrer Größe.

a) schönen
b) schöne
c) schöner
d) schönste

4.

B: Ja, der Mantel sitzt gut, aber die Farbe gefällt ___ nicht.

a) mich
b) ihr
c) mir
d) sich

5.

A: Sie haben ___, sie macht Sie dicker. Wir haben hier einen in dunkler Farbe.

a) Recht
b) Glück
c) Erfolg
d) Zeit

6.

B: Und diese Farbe ___ mir auch besser.

a) steht
b) liegt
c) zeigt
d) passiert

7.

A: Also kaufen Sie ___?

a) ihm
b) ihn
c) es
d) das

8.

B: Ja. ___ kostet er?

a) Wie viele
b) Wie
c) Viel
d) Was

9.

A: Es ist nicht teuer. Der ___ ist wirklich nicht hoch.

a) Anzug
b) Größe
c) Preis
d) Titel

10.

B: Na gut. Packen Sie ihn ein. Kann ich mit meiner Kreditkarte ___?

a) zu zählen
b) zählen
c) bezahlen
d) zu bezahlen

Բ մակարդակ

IX. Ո՞ր բառերն ու արտահայտություններն են համապատասխանում տեքստում ընդգծվածներին:

Այս առաջադրանքի օգնությամբ ստուգվում են գերմաներենից շրջանավարտի ավելի խորը գիտելիքները: Այս պատճառով այն բաղկացած է 10 կետից, որոնցից

յուրաքանչյուրը վերաբերում է լեզվի բոլոր բաժիններին՝ բացի հնչյունաբանությունից: Առաջադրանքը կատարելիս շրջանավարտը պետք է նախապես փորձի հասկանալ տեքստի ամբողջ բովանդակությունը: Այստեղ նույնպես կիրառվում է ճիշտ և սխալ ձևերի միջև նվազագույն տարբերությունների առկայության սկզբունքը, ինչը առաջին հայացքից կարող է շփոթմունք առաջացնել: Խորհուրդ է տրվում համապատասխան ընտրությունը կատարելիս նախապես այն ստուգել համատեքստում՝ փոխարինման սկզբունքով: Օրինակ՝

Der jährliche Sommerkarneval ist **weit über die Grenzen** Berlins hinaus bekannt.

1,2 Millionen Menschen besuchen das große **Straßenfest** jedes Jahr. Am **Pfingstsonntag** findet immer ein bunter **Umzug** statt. Er dauert von 12.30 Uhr bis 22 Uhr.

Die 4200 Musiker, Tänzer und Artisten haben 80 verschiedene **Nationalitäten**, aber sie leben alle in Berlin. Dieser internationale Umzug führt mitten durch Berlin.

105 Gruppen spielen flotte Musik, zeigen tolle Kunststücke und die **typischen** Tänze aus allen Kulturen. Die Gruppen tragen bunte **Kostüme** und führen fantastische Maskeraden vor. Für diesen großen **Auftritt** beim Karneval der Kulturen **bereiten sich** die Gruppen **monatelang** vor.

Eine große Tanzgruppe aus Brasilien tanzt Samba. Zu ihrem Kostüm gehört ein langer, weißer Rock, ein weißes Kopftuch und ein gelbes Tuch. Alle tragen bunte Blumen auf dem Kopf.

Alle Gruppen zeigen, dass Musik und Tanz international sind und **keine Grenzen kennen**.

51. … weit über die Grenzen bekannt sein …

Das bedeutet:

a) vielen Menschen bekannt sein
b) in vielen Orten bekannt sein
c) nicht so bekannt sein
d) in einer Stadt bekannt sein

52. ... Das Straßenfest ...
Das bedeutet:
a) Feier auf der Straße
b) auf der Straße lustig machen
c) die Straßenversammlung
d) die Straßendemonstration

53. ... Pfingstsonntag …
Das bedeutet:
a) ein christliches Fest
b) ein Schulfest
c) ein Familienfest
d) ein lustiger Sonntag

54. … ein Umzug …
Das bedeutet:
a) weiter gehen
b) durch die Straßen gehen
c) langsam gehen
d) spazierengehen

55. … Nationalitäten …
Das bedeutet:
a) die Gemeinde
b) ein Bezirk
c) ein einsprachiges Volk
d) eine Gruppe der Menschen

56. ... die typischen ...
Das bedeutet:
a) die charakteristischen
b) die charakterstarken
c) die bekannten
d) die beliebten

57. … Kostüme …
Das bedeutet:
a) Mäntel
b) Kleidung
c) Röcke
d) Jacken

58. … für diesen Auftritt …
Das bedeutet:
a) für dieses Auftreten
b) für diese Veranstaltung
c) für dieses Theater
d) für dieses Konzert

59. … sich monatelang vorbereiten …
Das bedeutet:
a) sich einen Monat vorbereiten
b) sich einige Jahre vorbereiten
c) sich einige Monate vorbereiten
d) sich nicht so viel vorbereiten

60. … keine Grenzen kennen …
Das bedeutet:
a) nirgends
b) in einigen Ländern
c) keine Länder kennen
d) überall

X. Գտնել ընդգծված նախադասության միակ ճիշտ անդրադարձը:

Առաջադրանքը բաղկացած է 5 ենթաառաջադրանքից: Այս առաջադրանքով ստուգվում են շարահյուսական կառույցներ կազմելու շրջանավարտի կարողությունները՝

բառագործածության տեսակետից: Առաջնայինը խթան-նախադասության և անդրադարձ-նախադասության իմաստային կապի բացահայտումն է, որը հնարավոր է խթան-նախադասության հիմնաբառի խորքային իմաստի և նրա համապատասխան ձևի ճիշտ համադրման միջոցով: Օրինակ՝ **Im Frühling wird das Osterfest gefeiert.** խթան-նախադասության **das Osterfest**, **feiern** հիմնաբառերը ենթադրում են իմաստային ուղղակի կապ ոչ թե **Blumen schenken, Schi laufen կամ den Lehrern gratulieren** արտահայտությունների, այլ **bunte Eier finden**-ի հետ: Ուստի ստորև նշված օրինակում միակ ճիշտ պատասխանը d-ն է:

Im Frühling wird das Osterfest gefeiert.

a) Die Kinder werden den Müttern schöne Blumen schenken.
b) Die Kinder werden viel Schi laufen.
c) Die Kinder werden den Lehrern gratulieren.
d) Die Kinder werden viele bunte Eier finden.

XI. Ընտրել ճիշտ փոխակերպումը:

Առաջադրանքը բաղկացած է 5 ենթաառաջադրանքից: Այս առաջադրանքը վերաբերում է գերմաներենի կարևոր քերականական իրողություններից Aktiv→Passiv և Passiv→Aktiv փոխակերպումներին: Տրված հինգ նախադասությունների մի մասը վերաբերում է առաջին տիպին, իսկ մյուսը՝ երկրորդին: Ընտրության համար առաջարկվող 4 ձևերից ճիշտ է միայն մեկը, իսկ մյուսները դրանից տարբերվում են շատ փոքր սխալներով, որոնք կարելի է հայտնաբերել միայն նյութի լավ իմացության դեպքում: Սխալ ձևերը կարող են լինել թե՛ շարահյուսական, թե՛ քերականական բնույթի: Մինչ վերջնական ընտրություն կատարելը խորհուրդ է տրվում համեմատել բոլոր նշված ձևերը, որից հետո միայն առանձնացնել միակ ճիշտ նախադասությունը: Օրինակ՝

Man unterdrückt die freie Meinung.

a) Man wird die freie Meinung unterdrücken.
b) Die freie Meinung wurde unterdrückt.
c) Die freie Meinung wird unterdrückt.
d) Die freie Meinung ist unterdrückt worden.

Die große Bibliothek von Alexandria wurde durch ein Feuer stark zerstört.

a) Ein Feuer zerstörte die große Bibliothek von Alexandria stark.
b) Ein Feuer zerstört die große Bibliothek von Alexandria stark.
c) Man hatte die große Bibliothek von Alexandria durch ein starkes Feuer zerstört.
d) Man hat die große Bibliothek von Alexandria durch ein starkes Feuer zerstört.

XII. Տեղադրել տեքստում բաց թողած համապատասխան բառերը:

Դիմորդից պահանջվում է ինչպես տեքստի բովանդակության նվազագույն ծավալով ընկալում, այնպես էլ համապատասխան բառագիտական և քերականական գիտելիքներ՝ տեքստի ամբողջականությունը վերականգնելու համար: Բաց թողած բառերը կարող են պատկանել տարբեր խոսքի մասերի և տարբեր քերականական երևույթների: Տեղադրման սկզբունքը նույնն է, զուգաձևությունները բացառվում են: Տեղադրելուց հետո շրջանավարտը կարող է ստուգել պատասխանը՝ տեքստի բովանդակության ամբողջականության տեսակետից: Օրինակ՝

___ (1) Kolumbos Amerika entdeckt hatte, fand ihm zu Ehren ein großes ___ (2) statt. Man sprach von seinem großen Sieg, von seiner Entdeckung und lobte ihn. Aber einige waren mit diesem

Lob nicht einverstanden. Sie sagten: „Diese Entdeckung ist ___ (3) Besonderes. Den Weg nach der neuen Welt ___ (4) jeder finden. Der Ozean stand allen offen.“ Diese ___ (5) hörte Kolumbos. „Ihr habt recht“, sagte er ruhig. „Mein Sieg ist gar nicht so groß, aber oft scheint etwas viel leichter, wenn ein anderer es schon früher vor uns gemacht hat.“

1.
a) Bevor
b) Während
c) Nachdem
d) Bis

2.
a) Fest
b) Begegnung
c) Versammlung
d) Party

3.
a) viel
b) etwas
c) nichts
d) wenig

4.
a) sollte
b) musste
c) durfte
d) konnte

5.
a) Lob
b) Worte
c) Gespräch
d) Wort

XIII. Տրված արտահայտություններից մեկի օգնությամբ վերականգնել նախադասությունները:

Տրված արտահայտություններից միայն մեկի օգնությամբ ամբողջացնելով նախադասությունը՝ դիմորդը ցուցաբերում է իր գիտելիքները ոչ միայն գերմաներենի շարահյուսական կառուցվածքների կազմության, այլև տարբեր բնույթի նախադասությունները միմյանցից տարբերելու, դրանք համապատասխան ձևով միմյանց կապելու, ինչպես նաև շարադասության կանոնների վերաբերյալ: Կազմվելիք հինգ նախադասությունից մի մասի համար անհրաժեշտ է վերականգնել պարզապես բացակայող կառույցը, մյուսի համար՝ գլխավոր կամ երկրորդական նախադասությունները: Ստուգվում են նաև դիմորդի քերականական գիտելիքները շարահյուսական գործառույթում: Այդ պատճառով առաջադրանքը կատարելիս խորհուրդ է տրվում, իմաստային համադրմանը զուգահեռ, գործադրել նաև քերականական ձևի համապատասխանության սկզբունքը: Օրինակ, հետևյալ առաջադրանքը կատարելիս a տարբերակը նույնիսկ իմաստով հակասում է **Ich gehe nicht zur Arbeit,** գլխավոր նախադասությանը, a, c և d տարբերակները բացառվում են, որովհետև **obwohl, weil** և **wenn** շաղկապները պահանջում են շրջուն շարադասություն, թեև c և d տարբերակները իմաստով չեն հակասում գլխավոր նախադասությանը: Տվյալ տարբերակներից երկրորդական նախադասության մեջ միայն **denn** շաղկապից հետո է պահպանվում ուղիղ շարադասությունը, ուրեմն միակ ճիշտ պատասխանը b-ն է: Օրինակ՝

Ich gehe nicht zur Arbeit, _____ .

a) obwohl ich fühle mich heute unwohl
b) denn ich fühle mich heute unwohl
c) weil ich fühle mich heute unwohl
d) wenn ich fühle mich heute unwohl

II. Բանավոր քննության պահանջները և գնահատման չափանիշները

Բանավոր քննության նպատակն է ստուգել դիմորդի լեզվական գիտելիքները և հաղորդակցական հմտությունները:

Բանավոր քննության հարցատոմսը բաղկացած է 2 հարցից.

1. Կարդալ, թարգմանել և պատասխանել տրված տեքստի վերաբերյալ հարցերին:
2. Զրույց առաջադրված թեմայով:

Բանավոր քննության պահանջներն են՝

1. Կարդալ տրված տեքստը՝ դրսևորելով ընթերցանության կանոնների իմացություն և հնչյունաբանական գիտելիքների գործնական կիրառման հմտություններ: Դիմորդին տրվող տեքստի ծավալը մոտավորապես մեկ էջ է: Այն համապատասխանում է ավագ դպրոցի համար նախատեսված տնային ընթերցանության նյութերի մակարդակին: Գրավոր թարգմանել տեքստի նշված հատվածը բառարանի օգնությամբ, պատասխանել հատվածի բովանդակությանն ուղղված հարցերին:
2. Քերականորեն ճիշտ ձևակերպելով և տրամաբանորեն զարգացնելով արտահայտած մտքերը՝ զրուցել հետևյալ թեմաների շուրջ՝

1. Republik Armenien
2. Jerewan-Hauptstadt von Armenien
3. Meine Heimatstadt (mein Heimatsdorf)
4. Bundesrepublik Deutschland

5. Großstädte Deutschlands
6. Die Feste in Deutschland
7. Österreich
8. Die Schweiz
9. Unsere Wohnung (Unser Haus)
10. Meine Freizeit
11. Wir gehen einkaufen
12. Wenn ich krank bin
13. Meine Zukunftspläne
14. Meine Ferien
15. Jahreszeiten
16. Mahlzeiten
17. Kommunikation (Post, Internet usw.)
18. Sport
19. Mein Lieblingsschriftsteller
20. Mein Lieblingskomponist
21. Die Reise
22. Hobby
23. Meine Schule (Meine Lehrer)
24. Kino (Theater)
25. Wir kümmern uns um unsere Umgebung

Բանավոր քննությունը գնահատվում էհետրյալ չափանիշներով՝

1. Տեքստի ընթերցում	0-3 միավոր
2. Թարգմանություն	0-5 միավոր
3. Ընթեցած տեքստի ընկալում	0-6 միավոր
4. Բանավոր հաղորդակցում	0-6 միավոր

Բանավոր քննությունը գնահատվում է 20 միավորանոց սանդղակով:
Գնահատականի բողոքարկման դեպքում դիմորդին տրվում է 4-5 նախադասություն հայերենից գերմաներեն թարգմանելու համար:

Բ ո վ ա ն դ ա կ ո ւ թ յ ո ւ ն

Նախաբան 3

Ցուցումներ պետական ավարտական և միասնական քննության մասին ……..……..... 3

Քննական աշխատանքի հատկորոշիչը 3

Պատասխանների ձևաթուղթը 8

Պատասխանների ձևաթղթի լրացման կարգը 9

Խորհուրդներ և ցուցումներ 11

Թեստի նկարագիրը և թեստային առաջադրանքների նմուշներ 12

Բանավոր քննության պահանջները և գնահատման չափանիշները …….... 30

Տպագրվել է Գնահատման և թեստավորման կենտրոնում:
Տպաքանակը՝ լրացուցիչ 7500 օրինակ, 34 էջ:
Ք. Երևան, Այգեստան 9/4, հեռ. 57.63.37
Գրքույկը վաճառքի ենթակա չէ:
www.atc.am